ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկաշեն համայնք, 1-ին փողոց, 14 ա, հեռ. 077863222

N- 27

«9» մարտի 2020թ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

ՄԵԾԱՐԳՈ ՄԱՐԶՊԵՏ

Կից Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 6-ի թիվ 2 արտահերթ նիստի որոշումները:

Առդիր 7 թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, 37477880300, haykashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2020թվականի N 6

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2020 թվականի մարտի 6-ի N 2 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՎԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՍԵՐՈԲՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված

Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի
ավագանու 06.03.2020թ. N- 6 որոշման

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2020 թվական մարտի 6 -ի N 2 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

   զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի N 36-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:

   զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի տարեսկզբի ազատ մնացորդը հաստատելու մասին:

   զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի 2020թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

   զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

5. Ներկայացուցչական ծախսեր կատարելու մասին:

   զեկուցող՝ Վ. Հովհաննիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, 37477880300, haykashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2020թվականի N 7-Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐ 17-Ի N 38-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի չորրորդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության 04.03.2020թ գրությամբ ներկայացված իրավական փորձագիտական եզրակացությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի <<2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 38-Ն որոշման մեջ կատարել փոփոխություն:

1. Եկամտային մասում՝

1) Փոխադրամիջոցների գույքահարկից գոյացած միջոցները ավելացնել 914.866 հազ. դրամ:

2) Սահմանել եկամուտ այլ ոչ հարկային եկամուտների մասով 55.134 հազ. դրամ:

2. Ծախսային մասում՝

1) Բաշխել նշված եկամուտները՝ 970.0 հազ. դրամ, 01.06.01 ծախսային ծրագրի 4212 հոդվածին:

3. Հաստատել տարեսկզբի ազատ մնացորդը՝ 1989429.20 դրամ:

4. Բաշխել տարեսկզբի ազատ մնացորդը ՝ 1989.4 հազար դրամ, ֆոնդային բյուջեի 01.06.01 ծախսային ծրագրի 5122 հոդվածին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՎԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՍԵՐՈԲՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

0010, Վազգեն Սարգսյան 3/8 , հեռ. 010-594018

№ ________

«__» ____________20 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ, ՀԱՅԿԱՇԵՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Ի պատասխան Ձեր 2020 թվականի մարտի 2-ի թիվ 23 գրության՝ կից ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու «Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության, արդարադատության նախարարության պետական փորձագիտական եզրակացությունը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՆԱՐԵԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Կատարող՝ Անահիտ Գևորգյան
ՀՀ ԱՆ իրավական ակտերի փորձաքննության գործակալություն
Հեռ. (010) 594116

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու «Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագծի վերաբերյալ**

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի ավագանու «Համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 38-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման նախագիծը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

**Իրավական ակտերի փորձաքննության**

**գործակալություն**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, 37477880300, haykashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՄԱՐՏԻ 2020թվականի N 8

ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի չորրորդ և հինգերորդ մասերի պահանջներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի 2020 թվակնի բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդը՝ 1989429.20 դրամ և ուղղել ֆոնդային բյուջեի 01.06.01 ծախսային ծրագրի 5122 հոդվածին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՎԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՍԵՐՈԲՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, 37477880300, haykashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 ՄԱՐՏԻ 2020թվականի N 9-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 5-րդ մասով՝ և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնքի 2020 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՎԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՍԵՐՈԲՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ
# ՀԱՅԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկաշեն համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Հայկաշեն, 37477880300, haykashen.armavir@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 ՄԱՐՏԻ 2020թվականի N 10

### ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեից հատկացնել 500.0 հազ. դրամ մարտի 8-ի <<կանանց միջազգային օրվա>> առթիվ համայնքապետարանի, բուժկետի, Հայկաշենի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի կին աշխատակիցների, 2019-2020 թ.թ. -ի նորապսակների և համայնքի <<տարեց կանանց՝ 80 տարեկան և բարձր>> համար նվերներ ձեռքբերելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐՄԵՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԶԱՎԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՍԵՐՈԲՅԱՆ ԱՆԴՐԻԱՍ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐՇԱՄ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ